

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԻԱՀԱՐԿ ՀԱՏՎԱԾԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ
ՎԵՐՆԱՀԱՐԿԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԲՄԱՇՁԲ-2020/2-ԵՊԲՀ»**

ք. Երևան

«28» 12 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Դ. Եսայանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Համալսարանի լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածամասերի վրա վերնահարկի ավելացման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **24 ամիս**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)։

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին։

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները։

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում։

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով։

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում։

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով։

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին։

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք։

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները։

3.3 Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը։

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը։

3.4 Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան։

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին։

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը։

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին։

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը։

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառու պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում, Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝

ՀՀ ԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄ

կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **392940842 (երեք հարյուր իննսուներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ութ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որից 65490140 (վաթսուներկու միլիոն չորս հարյուր իննսուսուց հազար մեկ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

STATE No. 15, 40

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է **29 (քսանինը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուին համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կոռյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,
Տերյան մ/6
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
Էլ. փոստ՝ agat-777llc@mail.ru
Հեռ. 094-94-85-84

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.



Տնօրեն Դ. Եսայան

(ստորագրություն)
Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի լաբորատոր մասնաշենքի միահարկ հատվածանասերի վրա վերնահարկի ավելացման աշխատանքների

հազ. ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
Հողային աշխատանքներ					
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	23.000	3.500	80.500
2	Բնահողի նտլիցք ձեռքով	մ3	18.000	3.000	54.000
3	Ավելնորոգ բնահողի բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 13կմ	տն	9.500	3.000	28.500
Ընդամենը					
					163.000
Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ /նոր կառուցվող շենք/					
4	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-12,5 դասի բետոնից	մ3	85.400	72.000	6,148.800
5	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ3	8.000	72.000	576.000
6	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	44.200	72.000	3,182.400
7	Ամրանի արժեքը Ф12մմ А500с դասի	տն	0.335	290.000	97.150
8	Ամրանի արժեքը Ф22մմ А500с դասի	տն	2.222	290.000	644.380
9	Ամրանի արժեքը Ф8մմ Ас-1 դասի	տն	1.103	320.000	352.960
10	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-12,5 դասի բետոնից /այդ թվում աստիճաններ/	մ3	16.930	72.000	1,218.960
11	Ամրանի արժեքը Ф10մմ А500с դասի	տն	1.852	320.000	592.640
12	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	21.600	72.000	1,555.200
13	Ամրանի արժեքը Ф16մմ А500с դասի	տն	0.930	290.000	269.700
14	Ամրանի արժեքը Ф22մմ А500с դասի	տն	1.805	290.000	523.450
15	Ամրանի արժեքը Ф8մմ Ас-1 դասի	տն	1.228	320.000	392.960
16	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	39.520	72.000	2,845.440

17	Ամրանի արժեքը Փ20նմ A500c դասի	տն	2.403	290.000	696.870
18	Ամրանի արժեքը Փ22նմ A500c դասի	տն	2.893	290.000	838.970
19	Ամրանի արժեքը Փ25նմ A500c դասի	տն	0.311	290.000	90.190
20	Ամրանի արժեքը Փ8նմ Ac-1 դասի	տն	2.050	320.000	656.000
21	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	70.600	91.000	6,424.600
22	Ամրանի արժեքը Փ12նմ A500c դասի	տն	11.598	290.000	3,363.420
23	Ամրանի արժեքը Փ16նմ A500c դասի	տն	0.296	290.000	85.840
24	Ամրանի արժեքը Փ20նմ A500c դասի	տն	1.174	290.000	340.460
25	Ամրանի արժեքը Փ8նմ Ac-1 դասի	տն	0.479	320.000	153.280
26	Միաձույլ ե/բ բարակլորների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	3.300	91.000	300.300
27	Ամրանի արժեքը Փ12նմ A500c դասի	տն	0.048	290.000	13.920
28	Ամրանի արժեքը Փ16նմ A500c դասի	տն	0.134	290.000	38.860
29	Ամրանի արժեքը Փ8նմ Ac-1 դասի	տն	0.098	320.000	31.360
	Ընդամենը				31,434.110
	Մետաղական կոնստրուկցիաներ				
30	Ներդիր էլեմենտներ 300x300x10նմ, 22հատ, 150x60x10նմ, 44հատ	տն	0.187	600.000	112.200
31	Մետաղական էլեմենտների պատրաստում և տեղադրում	տն	1.685	140.000	235.900
32	90x90x8նմ մետաղական անկյունակի արժեքը	զմ	74.000	5.100	377.400
33	120x80x3նմ մետաղական խողովակների արժեքը	զմ	53.000	4.350	230.550
34	80x60x4նմ մետաղական խողովակների արժեքը	զմ	26.400	3.900	102.960
35	40x40x2,5նմ մետաղական խողովակների արժեքը	զմ	65.000	1.350	87.750
36	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1.685	30.000	50.550
37	Ներդիր էլեմենտներ 200x200x10նմ 6 հատ /վերելակ/	տն	0.019	600.000	11.400
38	Վերելակի մետաղական կարկասի պատրաստում 140x140x3նմ մետաղական խողովակներից	տն	1.001	150.000	150.150
39	140x140x3նմ մետաղական խողովակների արժեքը	զմ	78.300	6.700	524.610
40	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1.001	30.000	30.030
	Ընդամենը				1,913.500
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ /նոր ավելացվող հարկ/				
41	Ե/բ ծածկի սալի ուժեղացում B-22,5 դասի բետոնից	մ3	37.650	100.000	3,765.000
42	5Bp ցանցի արժեքը	տն	1.421	1,850.000	2,628.850
43	Ամրանի արժեքը Փ16նմ A500c դասի	տն	4.337	290.000	1,257.730
44	Ամրանի արժեքը Փ8նմ Ac-1 դասի	տն	1.976	320.000	632.320
45	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-22,5 դասի բետոնից /սյուների աճեցում/	մ3	25.200	100.000	2,520.000
46	Ամրանի արժեքը Փ22նմ A500c դասի	տն	2.114	290.000	613.060

47	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.779	320.000	249.280
48	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-22,5 դասի բետոնից /ավելացվող ծածկ +7,45 նիշում/	մ3	85.000	100.000	8.500.000
49	Անյրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	18.343	290.000	5.319.470
50	Անյրանի արժեքը Փ20մմ A500c դասի	տն	1.718	290.000	498.220
51	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.570	320.000	182.400
52	Միաձույլ ե/բ սյունների պատրաստում B-22,5 դասի բետոնից /պարպալետի կանգնակներ և գոտի/	մ3	2.200	100.000	220.000
53	Անյրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	0.236	290.000	68.440
54	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.091	320.000	29.120
55	Միաձույլ ե/բ բարակլորների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	3.500	100.000	350.000
56	Անյրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	0.100	290.000	29.000
57	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.105	320.000	33.600
	Ընդամենը				26,896.490
	Մետաղական կոնստրուկցիաներ				
58	Ներդիր էլեմենտներ 300x300x10մմ, 100հատ, 150x60x10մմ, 200հատ	տն	0.848	600.000	508.800
59	Մետաղական էլեմենտների պատրաստում և տեղադրում	տն	5.792	150.000	868.800
60	90x90x8մմ մետաղական անկյունակի արժեքը	զմ	155.600	5.100	793.560
61	120x80x3մմ մետաղական խողովակների արժեքը	զմ	244.000	4.350	1.061.400
62	80x60x4մմ մետաղական խողովակների արժեքը	զմ	129.000	3.900	503.100
63	40x40x2,5մմ մետաղական խողովակների արժեքը	զմ	298.000	1.350	402.300
64	Մետաղական մակերևույթների 2 շերտ լուղաներկում	տն	5.792	30.000	173.760
	Ընդամենը				4,311.720
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ /3-րդ մասնաշենք /				
65	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ3	12.800	50.000	640.000
66	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	39.000	100.000	3.900.000
67	Անյրանի արժեքը Փ12մմ A500c դասի	տն	1.600	290.000	464.000
68	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.070	320.000	22.400
69	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ3	12.800	50.000	640.000
70	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	3.900	100.000	390.000
71	Անյրանի արժեքը Փ18մմ A500c դասի	տն	0.780	290.000	226.200
72	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	0.400	320.000	128.000
73	Միաձույլ ե/բ սյունների պատրաստում B-22,5 դասի բետոնից	մ3	33.600	100.000	3.360.000
74	Անյրանի արժեքը Փ22մմ A500c դասի	տն	1.900	290.000	551.000
75	Անյրանի արժեքը Փ26մմ A500c դասի	տն	2.050	290.000	594.500
76	Անյրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի	տն	1.330	320.000	425.600

77	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-22,5 դասի բետոնից		մ3	74.600	100.000	7.460.000
78	Անրանի արժեքը Փ16մմ A500c դասի		տն	0.380	290.000	110.200
79	Անրանի արժեքը Փ22մմ A500c դասի		տն	2.400	290.000	696.000
80	Անրանի արժեքը Փ25մմ A500c դասի		տն	5.670	290.000	1.644.300
81	Անրանի արժեքը Փ25մմ A500c դասի		տն	1.900	290.000	551.000
82	Անրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի		տն	3.070	320.000	982.400
83	Անցքերի շաղապիում պատերում d=18մմ		հատ	186.000	0.100	18.600
84	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B-22,5 դասի բետոնից		մ3	87.500	100.000	8.750.000
85	Անրանի արժեքը Փ10մմ A500c դասի		տն	0.374	290.000	108.460
86	Անրանի արժեքը Փ12մմ A500c դասի		տն	11.240	290.000	3.259.600
87	Անրանի արժեքը Փ16մմ A500c դասի		տն	0.050	290.000	14.500
88	Անրանի արժեքը Փ18մմ A500c դասի		տն	0.780	290.000	226.200
89	Անրանի արժեքը Փ20մմ A500c դասի		տն	0.680	290.000	197.200
90	Անրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի		տն	0.420	320.000	134.400
91	Միաձույլ ե/բ բարակրների պատրաստում B-22,5 դասի բետոնից		մ3	2.500	100.000	250.000
92	Անրանի արժեքը Փ10մմ A500c դասի		տն	0.300	290.000	87.000
93	Անրանի արժեքը Փ8մմ Ac-1 դասի		տն	0.140	320.000	44.800
	Ընդամենը					35,876.360
Ճարտարապետաշինարարական մաս						
94	40սմ հաստությամբ բետոնե բլոկներից արտաքին պատերի շարվածք անցքերի բետոնազնամբ և ամրանավորումով 465մ ²		մ3	186.000	40.000	7.440.000
95	Շարվածքի ամրանավորում Ac-1		տն	3.720	320.000	1.190.400
96	20սմ հաստությամբ բետոնե բլոկներից ներքին պատերի շարվածք անցքերի բետոնազնամբ և ամրանավորումով 914մ ²		մ3	182.800	38.000	6,946.400
97	Շարվածքի ամրանավորում Ac-1		տն	3.656	320.000	1,169.920
98	20 սմ հաստությամբ բետոնե բլոկներից պարապետի պատերի շարվածք անցքերի բետոնազնամբ և ամրանավորումով 98մ ²		մ3	19.600	38.000	744.800
99	Շարվածքի ամրանավորում Ac-1		տն	0.392	320.000	125.440
	Ընդամենը					17,616.960
Քանդման աշխատանքներ 1-ին հարկ						
100	Քարե պատի քանդում 3500սմ * 550սմ 24,2զմ		մ3	44.500	8.000	356.000
101	Քարե պատի քանդում 2100սմ * 550սմ 11,33զմ		մ3	12.500	8.000	100.000
102	Քարե պատի մասնակի քանդում 650սմ * 1200սմ 80,85զմ		մ3	60.200	8.000	481.600
103	Ե/բ ծածկի ձեռքով մաս-մաս քանդում h-400 սմ 16,5մ ²		մ3	6.300	15.000	94.500
104	Ե/բ ծածկի քանդում h-400 սմ 44մ ²		մ3	16.800	15.000	252.000
105	Կախովի առաստաղների քանդում		մ ²	667.000	0.500	333.500

106	Դ-ահիլիճի ձայնակլանիչ նյութերից կախտալի առաստաղի ապամոնտաժում մոնտաժման նպատակով	մ2	283.500	0.500	141.750
107	Դ-ահիլիճի առաստաղի լույսերի ապամոնտաժում և վերատեղադրում	հատ	4.000	1.500	6.000
108	Բեմի քանդում /վայտե կարկաս/	մ3	0.740	10.000	7.400
109	Բեմահարթակի կարկասի պատրաստում փայտե չորսուներից	մ3	0.740	200.000	148.000
110	Սյունների համար հատակի կետային քանդում 11մ2	մ3	1.050	15.000	15.750
111	Մետաղական աստիճանների քանդում և վերատեղադրում	տն	0.315	200.000	63.000
112	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում (168,3մ2, H=10սմ)	մ3	16.830	2.500	42.080
113	Խճի շերտի քանդում (168,3մ2, H=35սմ)	մ3	58.905	0.300	17.670
114	ՊԿԺ պանելների քանդում	հատ	34.000	5.000	170.000
115	Գլանաձև երկայնական ցերեկային լույսերի ապամոնտաժում օգտագործման նպատակով-մոնտաժում	հատ	44.000	1.500	66.000
116	Պրեստոգրանիտե հատակների քանդում	մ2	39.600	1.000	39.600
117	Ե/սյունների քանդում 350*350*5000 սմ 9 հատ	մ3	5.513	25.000	137.825
118	Ե/բ հեծանների քանդում 500*400 74,8զմ	մ3	14.960	25.000	374.000
119	Ե/բ ղեկրատիվ հեծանների քանդում 800*150 243,1 զմ	մ3	29.172	25.000	729.300
120	Մետաղական սյուների քանդում	տն	3.378	35.000	118.230
121	Պատի քանդում 530*2000 6,05 զմ	մ3	6.413	8.000	51.304
122	Ե/բ ծածկի քանդում 160սմ հաստությամբ 19,8մ2	մ3	3.168	25.000	79.200
123	Ճակատի կոնիցիոնների բարձրացում վերատեղադրում 3000-4000սմ	հատ	12.000	70.000	840.000
124	Օղակախողջան համակարգերի տանիքի էլեմենտների ապամոնտաժում	հատ	4.000	5.000	20.000
125	Ե/բ հիմքերի քանդում 600*600 79,2զմ	մ3	28.512	45.000	1,283.040
126	Ապակե բովների քանդում	մ2	19.910	0.500	9.960
127	Շին. աղբի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղակախում 13կմ	տն	732.969	5.900	4,324.517
	Ընդամենը				10,302.226
Վերակառուցում 1-ին հարկ					
128	Դ-ահիլիճ տանող աստիճանների հղկում	մ2	4.950	7.000	34.650
129	Բազրիք պլումինե /ըստ պատվիրատուի ցանկության/	զմ	7.700	27.000	207.900
130	Դրսի բազալտե աստիճանների վերակառուցում 2000*2400 բարձրությունը	զմ	2.400	7.000	16.800
131	Պ/գրանիտե հատակների պատրաստում /գույնը և չափերը ըստ պատվիրատուի ցանկության/	մ2	15.400	9.000	138.600
132	Կավորիճե հատակների քանդում	մ2	267.750	0.200	53.545
133	Կավորիճե հատակների պատրաստում	մ2	267.750	3.000	803.250
134	Շրիշակների տեղադրում /լամինատված/ 80սմ	զմ	61.000	1.200	73.200
135	Գրանիտե պատուհանագոգերի տեղադրում 370սմ 29,37զմ 3 սմ հաստությամբ	մ2	10.867	50.000	543.350

136	Վիտրաժների մոնտաժում այլումինե շրջանակներով /ջերմոկամրջակով/ բացվող հատված	մ2	12.100	50.000	605.000
137	Վիտրաժների մոնտաժում այլումինե շրջանակներով /ջերմոկամրջակով/ չբացվող հատված	մ2	12.100	45.000	544.500
138	Ինքնավակվող սլայդ դռներ 1500*2100 /դռան մեկ հատվածը 750*2100/	մ2	6.930	80.000	554.400
139	Ինքնավակվող սլայդ դռներ 1500*2100 /դռան մեկ հատվածը 750*2400/	մ2	3.960	80.000	316.800
140	Պատուհանների մոնտաժում այլումինե շրջանակներով չբացվող հատված	մ2	19.910	26.000	517.660
141	Չիսլային կամ բարտային փական սլայդ դռների համար	հատ	1.000	30.000	30.000
142	50մմ հաստությամբ ց/ավագե հարթեցնող շերտ	մ2	230.000	2.400	552.000
143	B-15 դասի բետոնից աստիճանների պատրաստում	մ3	0.880	80.000	70.400
144	Աստիճանների և աստիճանաստակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	4.180	22.000	91.960
145	B-15 դասի բետոնից թեքահարթակի պատրաստում	մ3	1.320	53.000	69.960
146	Թեքահարթակի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /թեքեովածքներով/	մ2	5.500	22.000	121.000
147	Անկյունից առաստաղի իրականացում ցինկապատ պրոֆիլներով	մ2	924.000	6.500	6.006.000
148	Սոստաղի երեսպատում 12,5մմ հաստությամբ գիպսկարտոնից ցինկապատ պրոֆիլներով /դահլիճ/	մ2	242.000	9.000	2.178.000
	ԸՆԴՈՒՄՆԵՐ				13,528.975
149	Քանդան աշխատանքներ 2-րդ հարկ				
149	Թիթեղյա տանիքների քանդում	մ2	766.500	0.200	153.300
150	Փայտե կոնստրուկցիաների քանդում	մ3	33.600	20.000	672.000
151	Սետաղական ֆերմաների ապամոնտաժում 1200*12000	տն	3.530	30.000	105.900
152	Քարե պատի քանդում 1200*550 261,25	մ3	165.000	8.000	1,320.000
153	Շին. աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղակոխում 13կմ	տն	360.499	5.900	2,126.944
	ԸՆԴՈՒՄՆԵՐ				4,378.144
	Վերակառուցում 2-րդ հարկ				
154	Գրանիտե պատուհանագոգերի տեղադրում 370մմ 111,65զմ 3 սմ հաստությամբ	մ2	41.311	50.000	2,065.530
